

Հ Ա Ն Գ Ի Ս Տ
ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ՎԱՀԱՆ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՄԿՐՏՉՅԱՆԻ
(1873—1958)

Ութսունհինգամյա հասակում, 1958 թվականի հուլիսի 22-ին, երկարատև հիվանդությունից հետո, ի Տեր հանգչավ Կրասնոդար քաղաքի ծխատեր արժանահիշատակ Տ. Վահան ավագ քահանա Մկրտչյանը:

Հանգուցյալը ծնվել էր 1873 թվականին, Վանի շրջանի Մխենիբ գյուղում, արհեստավորի ընտանիքում և սկզբնական կրթությունն ստացել՝ նախ ծննդավայրի ծխական և ապա Վանի խրմյան Հայրիկի անվան վարապա վանքի դպրոցում 1889—1896 թվականներին: Երկար տարիներ պարապել է ուսուցչությամբ: 1909 թվականին քահանա է ձեռնադրվել Աղթամարի վանքում իր դյուղի վրա և քահանայագործել է մինչև 1914 թվականը:

Վանի դպրոցից հետո հաստատվում է Թիֆլիս և ապա Կրասնոդար, որտեղ քահանայագործում է մինչև իր մահը:

Հանգուցյալը համեստ, պատվավոր և պարտաճանաչ հոգևորական էր, նվիրված իր գործին և իր ժողովրդին:

Հանգուցյալը իր բազմամյա պաշտոնավարության ընթացքում պարգևատրվել և դնահատվել է իր բարվոք ծառայության համար: Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ, վերջին տարիներին հանգուցյալ Տ. Վահան քահանան իր ծերության պատճառով հանգստյան թոշակ էր ստանում:

Հավիտենական հանգիստ իր հոգուն:

«Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»:

Հ Ա Ն Գ Ի Ս Տ
ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ԳԱՐԵԳԻՆ ՔԱՀԱՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ
(1901—1958)

Հոկտեմբերի 13-ին Կրասնոդար քաղաքում վաճխանվեց Տ. Գարեգին քահանա խաչատրյանը:

Հանգուցյալը ծնվել էր 1901 թվականին Կիրովաբադում (Գանձակում): Ստացել էր միջնակարգ և բարձրագույն կրթություն և երկար տարիներ զբաղվել էր ուսուցչությամբ, միշտ հաճախելով Բաբլի հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին:

1953 թվականին գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոսի ձեռամբ քահանա է ձեռնա-

դրվում, և մի որոշ ժամանակ պաշտոնավարում է Կիրովաբադում և ապա Կրասնոդարում, մինչև իր հանկարծամահ լինելը:

Հանգուցյալը զարգացած, գործունյա և հավատավոր եկեղեցական էր, պարգևատրված ժաղկյա փիլոսոփ և քահանայական լանջախաչով, իր բարվոք ծառայության համար:

Հավիտենական հանգիստ իր հոգուն:

«Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»:

